ԼՈՒՍԻԿ ԶԱՔԱՐՅԱՆ

ԴՈՆ ԴԵԼԻԼՈՅԻ «ԸՆԿՆՈՂ ՄԱՐԴԸ» ՎԵՊԸ ՊՈՍՏՄՈԴԵՌՆԻԶՄԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԱՄՆ-ն մշտապես համարվել է պոստմոդեռնիզմի զարգացման համաշխարհային կենտրոններից մեկը: Հենց այստեղ է սկսում զարգանալ պոստմոդեռնիզմի տեսությունը՝ ֆրանսիացի պոստստրուկտուրալիստների ինտելեկտուալ-փիլիսոփայական, գրականագիտական և հետֆրեյդյան գաղափարների հանդեպ մեծ հետաքրքրության ֆոնին: Ամերիկյան հողը, փաստորեն, ավելի բարենպաստ եղավ նոր գաղափարների ընկալման և տարածման համար: Դա, իհարկե, ուներ իր պատճառներն ու բացատրությունը: Այստեղ պահանջարկ կար որակելու արվեստի բնագավառում առաջացած այն բոլոր նոր միտումները, որոնք մեծ թափ առան 20-րդ դարի 50-ական թվականներին և զարգացման գագաթնակետին հասան 70-ականներին: Այս զարգացումները բերեցին մշակութային հեղափոխության, որի հետևանքով մոդեռնիզմն իր տեղը մեծապես զիջեց պոստմոդեռնիզմին:

Ամերիկյան պոստմոդեռնիզմի ականավոր ներկայացուցիչներից է վիպասան, էսսեիստ Դոն Դելիլոն, ով, սկսելով ստեղծագործել դեռևս նախորդ դարի 70-ականներին, շարունակում է ակտիվ գրական կյանքը մինչ օրս:

Թեև Դոն Դելիլոն թե իր հարցազրույցներում և թե տարբեր ելույթներում իրեն որևէ ուղղության ներկայացուցիչ չի համարում, գրականագետներն ու մի շարք հայտնի գրողներ ու քննադատներ, այդ թվում՝ Հարոլդ Բլումը, Թոմաս Փինչոնը, Ֆիլիպ Ռոթը, Քորմաք ՄըքՔարտին և այլք, նրան համարում են պոստմոդեռնիստ: Չենք կարող չհամաձայնել այն մտքի հետ, որ Դելիլոյի ստեղծագործություններում ակնհայտ ուրվագծվում են պոստմոդեռնիզմը բնութագրող հիմնական հայեցակարգերը, ինչն իր արտացոլումն է գտել հեղինակի վաղ շրջանի վեպերում: Ինչ վերաբերում է «Ընկնող մարդը» վեպին, որի վերլուծությանը նվիրված է տվյալ հոդվածը, ապա կարող ենք փաստել, որ այդ ստեղծագործությունում Դելիլոն փոխում է շեշտադրումներն ու նոր մոտեցումներ ցուցաբերում թե խնդիրների լուծման, թե վեպի կառուցվածքի առումով: Հոդվածի շրջանակներում կփորձենք ցույց տալ, թե պոստմոդեռնիզմի հատկապես որ հայեցակարգերն են օգտագործված Դելիլոյի կողմից և որ հարցերում է հեղինակը շեղվում դրանցից:

Նման «շեղումներն» օրինաչափ են, եթե հաշվի առնենք, որ «Ընկնող մարդը» գրվել է 2004-2007 թվականներին, երբ արդեն իսկ շրջանառության

մեջ էր մտել «պոստպոստմոդեռնիզմ» տերմինը, և գրականության (նաև գրականագիտության) մեջ նոր միտումներ էին նկատվում:

Դելիլոյի վեպը սվիրված է 21-րդ դարի առաջին խոշոր ահաբեկչությանը՝ 2001թ. սեպտեմբերի 11-ի դեպքերին: Դեռևս նախքան վեպի լույս ընծայվելը գրաքննադատները Դելիլոյին մարգարե էին անվանում՝ վկայակոչելով այն հանգամանքը, որ իր նախորդ ստեղծագործություններում նա կանխագուշակում է ապագայի աղետները: Մասնավորապես, դեռևս 1991 թվականին լույս տեսած «Մառ 2» գրքի շապիկին երկնաքերներն ամպերով են պատված, իսկ հերոսներից մեկը խոսում է դրանց վերացման անհրաժեշտության մասին: Հարկ է նշել, որ հենց «Մառ 2»-ում Դոն Դելիլոն առաջին անգամ անդրադառնում է «ապահովագրված» ԱՄՆ-ի քաղաքացու խնդրին, որի գիտակցության մեջ ամրագրված է երաշխավորվածության զգացումը:

«Նա ունի համալսարանական դիպլոմ, սեփական գործ, սեփական սրտաբան, խնայողություններ, հետաքրքրություններով լի կյանք, բազմակողմանի բժշկական ապահովագրում: Սակայն կան իրավիճակներ, երբ երաշխավորված պարտականությունները պարզապես չեն գործում»[1], - իր հերոսի մասին գրում է Դելիլոն: Հենց նման ընկալումը և երաշխավորված պարտականությունների չգործելը նկատի ունի հեղինակը, երբ գրում է. «Մենք ոտք դրեցինք անորոշության ու վախի դարաշրջան»[2]: Այսինքն, ԱՄՆ-ի «ապահովագրված քաղաքացին» կորցրեց իր «երաշխիքային վստահությունը»:

Ահա այս խնդիրներն են դառնում Դելիլոյի «Ընկնող մարդը» վեպի առանցքային թեման: Ողբերգության բարոյական և հոգեբանական կողմերը ստեղծագործության մեջ առաջնային են: Պոստմոդեռնիզմին հատուկ բոլոր հնարներն օգնում են Դելիլոյին շատ ավելի տպավորիչ դարձնել գործը: Հեղինակային դիմակի կիրառումը, դիտավորյալ կերպով ստեղծված տեքստի կտրտվածությունը, իրերի ֆետիշացումն ու սիմուլյակրերի կիրառումը, տեքստի կրկնակի կոդավորումը ստեղծում են քառսի այն անհրաժեշտ էֆֆեկտը, որը իր էությամբ ամենամոտն է ահաբեկչական իրավիճակին:

Հարկ է նշել, որ ստեղծագործելով պատմական այնպիսի դարաշրջանում, երբ մեդիան և տեղեկատվական տեխնոլոգիաները գրավել են մարդկանց առօրյան, ժամանակակից հեղինակի մոտ հաճախ «դիմակավորվելու» և յուրովի աշխարհը պատկերելու պահանջ է առաջանում: «Ընկնող

[1] DeLillo D. Mao 2. NY. 1991. P.2
[2] Henning P. Maybe I see some things more clearly and earlier than others. interview with DeLillo. Frankfurter Rundschau. 2003

մարդը» վեպում Դելիլոն լայնորեն կիրառում է պոստմոդեռնիզմին հատուկ հեղինակային դիմակի հնարքը: Վեպն ամբողջովին որվագային է, որտեղ պարբերաբար տարբեր սյուժետային գծեր, տարբեր կերպարներ ու պատմություններ միախառնվում են ու ստեղծում յուրօրինակ կոլաժ, որոնց միակ կապող օղակը Դելիլոն է, որին, սակայն, տեքստում գտնելը անհնար է: Ընթերցողի համար Դելիլոյին՝ որպես գրող, ստեղծագործության միջոցով ընկալելը բարդ է, դժվար է անգամ հասկանալ՝ որտեղ է սկսվում հեղինակի խոսքը, որտեղ ավարտվում, երկխոսությունների մասնակիցներն ովքեր են և արդյոք դրանք արտացոլում են հեղինակի կարծիքը տվյալ խնդրի վերաբերյալ: Այստեղ միայն մի բան է հստակ. Դելիլոն այն հեղինակն է, ով, դիմակավորվելով բառերի, նախադասությունների և որոշակի կառուցվածքների միջոցով, պարզապես համակարգում է կտրտված պատմությունները, մտքերը, երկխոսությունները, մենախոսությունները, ինչի շնորհիվ վեպն ավելի դինամիկ է դառնում, իսկ ընթերցողի ուշադրությունը մշտապես լարված է մնում՝ որևէ մասնիկ բաց չթողնելու ձգտումով:

«Շատ տարիներ առաջ ես կարծում էի, որ գրողն ի վիճակի է ինչ-որ բան փոխել, առնվազն գոնե մշակույթի մեջ: Դա հաջողվել է Կաֆկային ու Բեքետին: Այժմ այդ բնագավառը բռնազբաղվել են ռումբերով և հրացաններով տղաները: Նրանք գրավում են մարդկանց հոգիները, ավելի վաղ դա անում էինք մենք՝ գրողներս: Այժմ մեր հնարավորությունները սահմանափակում են ահաբեկչությունը, լուսանկարչական սարքերը, ռադիոընդունիչները, ռադիոընդունիչի տակ կերպարանափոխված ռումբերը: Աղետների մասին հաղորդագրությունները՝ ահա ողջ տեքստը, այլ պատմություններ մարդկանց արդեն պետք չեն: Որքան ավելի մոայլ է լուրը, այնքան ավելի վառ է պատմությունը»[3]: Թերևս ներկայիս իրավիճակի նման գիտակցումն է ստիպում գրողին դիմակավորվելու և ի վերջո ոչ մի լուծում չառաջարկելու, ինչը, իհարկե, չափազանց բնորոշ է պոստմոդեռնիստներին: Հարկ է նշել, որ հաճախ հենց այս մոտեցման համար էլ պոստմոդեռնիստները քննադատության թիրախ են դառնում, քանի որ չկա հստակ դիրքորոշում և խնդրի լուծման որևէ տարբերակ, գրողը պարզապես նկարագրում է իրավիճակը և «լվանում ձեռքերը»՝ պատասխանները թողնելով ընթերցողի հայեցողությանը: Դելիլոյի նույնն է անում. ստեղծագործության մեջ չկա որևէ խնդիր, որին լուծում կարող է տրվել՝ ըստ Դելիլոյի: Չկա մեկ գծով ընթացող սյուժե, այստեղ խոսվում է երկու ընտանիքների հետահաբեկչական կյանքի մասին, միաժամանակ փորձ է արվում Ալցեյմերով հիվանդների աչքերով տեսնել սեպտեմբերի 11-ի դեպքերը, ինչպես

[3] Amend Ch. Diez G. I don't know America anymore. Interview with DeLillo Die Zeit. 2007

նաև նկարագրել երեխաների պատկերացումները միևնույն իրավիճակի մասին: Վեպից դուրս չեն մնում նաև ահաբեկիչները, նրանց նման քայլերի ուղղորդող դրդապատճառները:

Այստեղ տեղին է նշել Դելիլոյի կողմից օգտագործվող նոնսելեկցիան (չընտրողականությունը): Նոնսելեկցիան հեղինակի համար նշանակում է «տեքստի ստեղծման ընթացքում» լեզվաբանական կամ այլ տեսակի տարրերի կանխամտածված օգտագործման մերժում, իսկ ընթերցողի համար՝ «տեքստի կապակցված վերարտադրման» ցանկացած հնարավորության բացառում[4]:

Իրականում նոնսելեկցիան պոստմոդեռնիստական տեքստի կառուցման հիմնարար սկզբունքն է, որը հանդես է գալիս որպես տարբեր երևույթների և տարբեր մակարդակների վրա զտնվող խնդիրների խառնուրդ, ինչպես ամենա ոչ էական, այնպես էլ չափազանց խնդրահարույց երևույթների կարևորության հավասարեցում, պառճառների և հետևանքների վերադասավորությունը, ամեն ինչ հավասարապես կարևոր և հավասարապես արժեքավոր է քառսային և հարաբերական աշխարհում, որտեղ արժեզրկված է ցանկացած երևույթ:

Դելիլոյի վեպում կարելի է գտնել այս պնդումներից բացառապես յուրաքանչյուրը: Վեպում իրենց կարևորությամբ հավասարվում են բոլոր երևույթները, իրերը, մարդիկ, պատմական իրադարձությունները: Չկա որևիցե մի փաստի նախապատվություն կամ հատուկ ընդգծվածություն, բոլոր խնդիրները միահյուսված են, բխում են մեկը մյուսից և դրվագ առ դրվագ հառնում ընթերցողի առջև:

«Նա կարդացել էր ամեն բան, ինչ գրում էին ահաբեկչության մասին: Մտածում էր իր հոր մասին: Նա պատկերացնում էր՝ ինչպես է հայրը շարժասանդուղքով իջնում ներքև, ինչպես օդանավակայանում: Քեյթը դադարել էր սափրվել, ինչ իմանաս, ինչ է դա նշանակում»[5]:

Այս կարտված արտահայտություններից և տարբեր հարթությունների վրա զտնվող խնդիրներից մեկ ընդհանուր պատկեր է կազմվում՝ կյանք, որը միայն մեկ մարդու է պատկանում, և այդ քառսային իրականությունը հնարավոր չէ նկարագրել այլ կերպ, քան նման հնար օգտագործելով: Եվ այստեղ իրենց կարևորությամբ հավասարվում են, օրինակ, թե ահաբեկչությունը, թե հերոստիտ՝ հոր հետ կապված ապրումները, թե ամուսնու հետ փոխհարաբերությունները, որոնք, որքան էլ տարբեր են իրենց բնույթով, միաժամանակ հավասարազոր են մեկ մարդու կյանքի վրա ունեցած ազդե-

---

[4] Ильин И.П. Постмодернизм от истоков до конца столетия: эволюция научного мифа. Нонселекция http://www.gumer.info/bogoslov_Buks/Philos/Ilin_Mod/17.php

[5] DeLillo D. The Falling Man. NY. 2007. P.72

ցությամբ: Սա պոստմոդեռնիստական զգայունության տիպիկ դրսևորում է, որը Դոն Դելիլոյի վեպում հանդիպող ցայտուն ու ընդգծված հայեցակարգերից է: Պոստստրուկտուրալիզմին և պոստմոդեռնիզմին բնորոշ այս հայեցակարգն արտահայտում է աշխարհընկալման յուրատիպ ձևը և տեսականորեն այդ պատկերացումներին համապատասխան արձագանքման միջոցները, որոնք բնորոշ են պոստմոդեռնիստական ուղղվածություն ունեցող ժամանակակից գրականագետների մտածողությանը:

Դելիլոյի ստեղծագործություններում պոստմոդեռնիստական ազատ ընտրության, բազմակարծության մոտեցումը շատ կարևոր սոցիալ-քաղաքական կշիռ ունի: Ըստ էության, պոստմոդեռնիստները կյանքի են կոչում իրադարձությունների ընթացքին չխառնվելու գաղափարը, և քանի որ խնդիրների լուծման եղած տարբերակներից ոչ մեկը լավագույնը չի կարող համարվել, ավելի տրամաբանական է հարմարվել իրականությանը: Սրանով իսկ կորում է սոցիալական փիլիսոփայության քննադատական ոգին, և պոստմոդեռնիստների ստեղծագործություններն արդեն այդքան չեն հուզում և չեն մտահոգում քաղաքական գործիչներին, ինչպես օրինակ, էքզիստենցիալիստների և ֆրանկֆուրտյան դպրոցի ներկայացուցիչների (Թեոդոր Ադորնո, Հերբերտ Մարկուզե, Էրիխ Ֆրոմ, Յուրգեն Հաբերմաս) գաղափարները: Իհարկե, չի կարելի չընդունել, որ պոստմոդեռնիստները հեռանում են քաղաքական ոլորտ ուղիղ միջամտությունից այն առումով, որ նրանք խուսափում են գործադրություններից, որոնք անմիջապես ուղղված են իշխանական կառույցների դեմ: Սակայն, միաժամանակ, սոցիալական իրավիճակը հեղափոխությունների միջոցով փոխելու մոդեռնիստական բոլոր մտադրությունները, մեղմ ասած, տխուր հետևանքների բերեցին: Այս փաստը, անշուշտ, չէր կարող չազդել նոր դարի մարդու մտածողության վրա: Հենց այդ պատճառով պոստմոդեռնիստական ուղղության ներկայացուցիչներն իրենց «նոր փիլիսոփայությամբ» պատրանքային են համարում սոցիալական արմատական փոփոխությունների միջոցով ազատության հասնելու գաղափարները:

Այստեղ ակնհայտ է «նոր փիլիսոփաների» հիասթափությունը առ այն, որ հնարավոր է հասարակությունը ավելի լավը դարձնել, ինչը անմիջականորեն պայմանավորված է 1968 թվականի մայիսյան իրադարձությունների ձախողմամբ: Այսպես թե այնպես, մինչև վերջ լուծված չէ այն հարցը՝ արդյոք անհատն ի վիճակի է ազատվել իշխանությունների շղթաներից, որն անմիջականորեն ձևավորում և ուղղորդում է իր կենսակերպը:

Քաղաքական գործընթացներից կտրված լինելու հանգամանքը չի հերքում նաև Դոն Դելիլոն, նա անգամ չի խոսում իր քաղաքական դիրքորոշման մասին՝ հայտարարելով, որ նույնիսկ ընտրության գնում է կնոջ

ստիպողական գործողությունների պատճառով։ Հարցին՝ որ քաղաքական թևին է աջակցում Դելիլոն, գրողն ասում է. «Ես անկախ եմ։ Եվ այլևս չեմ ցանկանում խոսել այդ թեմայով»։

Եվ թեև մինչ «Ընկնող մարդը» ստեղծագործության հրապարակումը արդեն իսկ բազմաթիվ վարկածներ կային այն մասին, որ նյույորքյան ահաբեկչությունը կազմակերպված է եղել հենց ամերիկյան իշխանությունների, մասնավորապես, Ջորջ Բուշ կրտսերի և իր ընտանիքի կողմից (Մայքլ Մուրը «Ֆարենհեյթ 9/11» ֆիլմում փորձում է ապացուցել նախագահի կապը ահաբեկչական գործողությունների հետ և Ուսամա Բեն Լադենի հետ հին բարեկամական հարաբերությունները՝ սեփական արատավոր գործողությունները կոծկելու և իրաքյան պատերազմն արդարացնելու նպատակով), Դելիլոն անգամ հպանցիկ չի մոտենում հարցի քաղաքական կողմին։ Իրադարձությունների սոցիալ-քաղաքական դաշտը բաց է մնում ստեղծագործությունում, որի հիմնական նպատակը մարդկային ապրումների ու հետահաբեկչական կյանքի նկարագրումն է։ Թեև Zeit ամսագրի հետ հարցազրույցի ժամանակ Դելիլոն նշում է, որ սկսել է գրել «Ընկնող մարդը» անմիջապես Ջորջ Բուշ կրտսերի վերընտրվելուց հետո՝ զգալով, որ պետք է ինչ-որ բանով հակադարձել Բուշի հաղթանակին, իրականում այս գործը չի համարվում քաղաքական ենթատեքստով ստեղծագործություն։

Միայն մեկ բան կարող ենք փաստել, այն, որ Դելիլոն անտղդամկիտորեն մեղադրում է ԱՄՆ-ին ավտորիտար համակարգով ապրող երկրների գործերին չափազանց շատ միջամտության մեջ՝ այդպիսով հասկացնելով, որ միգուցե պետք չէ ամենակարողի դերում հանդես գալ և սեփական մտածողությունը պարտադրել ողջ աշխարհին։ Այսպիսով, Դելիլոն, ըստ էության, հակադրվում է պոստմոդեռնիզմը բնութագրող հասկացություններից մեկին՝ եռկոնսերվատիզմին՝ մերժելով անգամ այս գաղափարը, միաժամանակ բաց թողնելով նաև այս հարցի լուծման հնարավոր որևէ տարբերակ։

Այս ամենով հանդերձ չի կարելի թերագնահատել «Ընկնող մարդը» ստեղծագործության կարևորությունը, որն առաջարկում է տեսնել ու հասկանալ արդեն նոր դարի մարդուն, այնպիսի հարցադրումներ է անում, որոնց անպայմանորեն բախվում է նոր հազարամյակի մարդը, ինչն անհրաժեշտ է ներկայիս իրականությունը առավել խորը պատկերացնելու համար։ Դելիլոն կարողանում է միայն իրեն հատուկ նկարագրական միջոցներով հնարավորինս խորը թափանցել ցանկացած առարկայի, երևույթի, իրադարձության մեջ, և խնդիրը բազմապիսի կողմերից ներկայացնելով՝ հնարավորություն է ընձեռում ընթերցողին ընտրել իր համար լավագույն տարբերակը։